ՀՀ Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանի շնորհավորական ուղերձն Աշխատանքի և աշխատավորների միջազգային օրվա առթիվ

01.05.2024

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Մայիսի 1-ի՝ Աշխատավորների համերաշխության միջազգային օրվա առթիվ:

Աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ հարգանքը հայ ազգին բնորոշ ինքնատիպ առանձնահատկություններից է, որն ավանդաբար տոնում ենք՝ մեր վերաբերմունքն արտահայտելով աշխատանքի և աշխատավորի հանդեպ:

Աշխատանքի նկատմամբ ունեցած բոլոր պատկերացումները, ձգտումներն ու ակնկալիքները թող նպաստեն աշխատանքային հարաբերությունների առավել կատարելագործմանը, մարդու ապրելակերպի, կենսապայմանների բարելավմանը, մեր պետության հզորացմանն ու ինքնիշխանության ամրապնդմանը:

Մեկ անգամ ևս շնորհավորելով բոլորիդ մայիսմեկյան տոնի առթիվ՝ մաղթում եմ խաղաղություն, լիություն ու բարեկեցություն ձեր ընտանիքներին:

Թող հաջողությունն ուղեկցի ձեզ՝ ձեր արդար ու քրտնաջան աշխատանքում: